ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 3/29

ք.Երևան « 13 » Հունվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը, քննության առնելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 09.11.2022թ.-ի N 1518374 վարչական ակտի դեմ «ԼԱՎԱՆԴԴԱ» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 05025991) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԼԱՎԱՆԴԴԱ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն, բողոքաբեր) դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

Սույն դիմում-բողոքով ներկայացվում է առարկություն ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչության 09.11.2022թ.-ի N 1518374 վարչական ակտով առաջադրված տուգանքի վերաբերյալ:

Համաձայն 09.11.2022թ.-ի N 1518374 արձանագրության՝ «ԼԱՎԱՆԴԴԱ» ՍՊԸ-ին պատկանող ք.Աշտարակ, Նարեկացու 192/1 հասցեում գտնվող դեղատնից իրականցվել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիա:

Ստուգման շրջանակներում արձանագրվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 30-րդ հոդվածի 3-րդ մասի պահաջները:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«ԼԱՎԱՆԴԴԱ» ՍՊԸ-ն 07.04.2022թ-ի թիվ Բ8190874001, 02.06.2022թ-ի թիվ Բ6019697846, 30.06.2022թ-ի թիվ Բ0401769544, 21.10.2022թ-ի թիվ Բ1458377248 հաշիվ- վավերագրերով իրականացրել է դեղերի մանրածախ իրացում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ դեղերի մեծածախ իրացում է համարվում գործունեության այն տեսակը, որը ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղեր ձեռք բերելը կամ ներմուծելը կամ արտահանելը կամ պահպանելը կամ իրացնելը (բաշխելը), բացառությամբ սպառողներին դեղերի իրացման:

Նույն հոդվածի 43-րդ կետի համաձայն դեղերի մանրածախ իրացում է համարվում դեղերի իրացում կամ բաց թողնում սպառողներին:

Հարկ է նշել, որ գնորդները հանդիսանում են վերջնական սպառողներ, այլ ոչ թե վերավաճառողներ, քանի որ դեղերը ձեռք են բերել կազմակերպության կարիքների համար, այդ իսկ պատճառով «ԼԱՎԱՆԴԴԱ» ՍՊԸ-ի մոտ չի առաջանում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի աղյուսակում ներառված գործունեության՝ դեղերի մեծածախ իրացում, լիցենզիայի պահանջը:

Տեղեկացվում է նաև, որ գնորդի կողմից դեղերի ձեռքբերումը կապված չէ կազմակերպության տնտեսական գործունեության հետ, որը վկայում է «ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի (02588804) կողմից տրված հայտարարությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության կողմից 09.11.2022թ.-ի N1518374 ստուգման ակտը:

<u>2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 09.11.2022թ.-ի N1518374 վարչական ակտը (այսուհետ նաև՝ վարչական ակտ), որով մասնավորապես արձանագրվել է.

ՀՀ ՊԵԿ ՀՕՀ վարչության պետի 21.10.2022թ-ի թիվ 1518374 որոշման համաձայն «Լավանդդա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ իրականացվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Իրականացված ՕՀՄ-ի շրջանակներում պարզվել է, որ Ընկերությունը մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո (2020 թվականի օգոստոսի 15-ից), 07.04.2022թ.-ի թիվ Բ8190874001, 02.06.2022թ.-ի թիվ Բ6019697846, 30.06.2022թ.-ի թիվ Բ0401769544, 21.10.2022թ.-ի թիվ Բ1458377248 հաշիվ-վավերագրերով իրականացրել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիան:

ՕՀՄ-ի իրականացման ընթացքում՝ 25.10.2022թ-ին, ՀՀ ՊԵԿ ՀՕՀ վարչության աշխատակիցների կողմից կատարվել է այցելություն Արագածոտնի մ. ք. Աշտարակ, Նարեկացու 192/1 հասցեում գործող Ընկերությանը պատկանող դեղատուն, որտեղ «Լավանդդա» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Պռոշյանը ներկայացրեց ՀՀ Առողջապահության Նախարարությունից 02.07.2020թ.-ին ստացված Կ-ԴԳ-002627 լիցենզիան և գրավոր հայտարարություն է տվել այն մասին, որ Ընկերությունը Արագածոտնի մարզի ք. Աշտարակ, Նարեկացու փ. 192/1 հասցեում իրականացնում է դեղատնային գործունեություն համաձայն՝ ՀՀ Առողջապահության Նախարարությունից 02.07.2020թ.-ին ստացված Կ-ԴԳ-002627 լիցենզիայի: Համաձայն Ընկերության տնօրեն՝ Գևորգ Պռոշյանի կողմից տրված գրավոր հայտարարության՝ Ընկերությունն աշխատում է շրջանառության հարկի հարկման դաշտով, ունի տեղադրված թվով 1 ՀԴՄ սարք և դեղորայքի վաճառքն իրականացնում է նաև հաշիվ-վավերագրերի դուրսգրման միջոցով:

ՕՀՄ-ի ընթացքում «Արմենիա Վայն գործարան» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02588804) ֆինանսական տնօրեն Կարինե Սևյանը 25.10.2022թ.-ին տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ 07.04.2022թ.-ին և 30.06.2022թ.-ին «Լավանդդա» ՍՊԸ-ից ընկերությունը ձեռք է բերել համապատասխանաբար 46.550 ՀՀ դրամ և 9510 ՀՀ դրամ արժեքներով դեղորայք՝ Ընկերության կարիքների համար:

ՕՀՄ-ի ընթացքում հետազոտելով (pharm.cals.am) կայքը՝ պարզվել է, որ Ընկերության կողմից դուրս գրված հաշիվ-վավերագրերում նշված՝ «Պարացետամոլ» 500 մգ հաբ, «Ասկոֆեն» հաբ, «Իբուպրոֆեն» 200 մգ, «Նուրոֆեն» դեղահաբ N20, «Անալգին» ամպ. 50% մլ, «Դիմեդրոլ» սրվ. 1 մլ, «Պալյագին» հաբ 10 մգ, «Նո-Շպա» 40 մգ, «Լիդոկային» 5/15 մգ, «Տեմպալգին» Հ20 հաբ, «Սմազմալգոն» հաբ, «Դեկսալգին» 25 մգ, «Նիմեսիլ» N 30, «Կատաֆաստ» 50 մգ փոշի, «Անտի

Գրիպին» հաբ, «Օտիպակս» ականջի կաթիլներ 15 մլ, «Սմեկտա» N 10, «Սպազմատոն» հաբ N 50, «Անալգին» 0,5 գ հաբ, «Կապտոպրիլ» 25 մգ, «Դեքսամետազոն» 4 մգ 1 մլ, «Կոռվալոլ» 25 մլ, «Ցիտրամոն-Պ» հաբ անվանումներով ապրանքները հանդիսանում են դեղամիջոցներ:

Թիվ 1518374 արձանագրությամբ 01.11.2022թ. հարուցվել է վարչական վարույթ: Պատշաճ ծանուցված լինելով, նշանակված վարչական վարույթի լսումներին ներկայացել է Ընկերության տնօրեն՝ Գևորգ Պռոշյանը (Նույն քարտ՝ 005850151) և ներկայացրել է գրություն: Գրությամբ հայտնել են, որ Ընկերության կողմից վերոգրյալ դեղորայքի վաճառքը իրականացրել են չիմանալով, որ իրականացրել են դեղերի մեծածախ իրացում, փոքր եկամուտ են ունեցել և հայցել են ներողամտություն:

Վերոգրյալի վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը հարկ է համարում նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված հիշյալ խախտման համար պատասխանատվությունը բացառող հանգամանքներ նախատեսված չեն, ինչպես նաև վարույթ իրականացնող մարմինը հարկ է համարում նշել, որ «Սպառող» հասկացությունը սահմանված է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենում, որի համաձայն սպառողը՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին է: Հետևաբար, դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող սուբյեկտը կարող է դեղեր իրացնել կամ բաց թողնել միայն քաղաքացիներին՝ ապահովելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջները:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ օրենսդրության համաձայն այլ կազմակերպությունները կարող են դեղ ձեռք բերել դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող մատակարարներից, եթե ունեն դեղատնային գործունեության կամ բժշկական օգնության և սպասարկման լիցենզիաներ:

Ամբողջ վերոգրյալը հաշվի առնելով և հիմք ընդունելով վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերը, վարչական վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարում ընկերության կողմից առանց լիցենզիայի առկայության լիցենզավորման ենթակա՝ դեղերի մեծածախ իրացում իրականացնելու հանգամանքը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ առանց լիցենզիայի սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Վերոշարադրյալ արարքն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ … «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու … դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

Միևնույն ժամանակ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 3-րդ մասի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված խախտումներ հայտնաբերվելու դեպքերում խախտումներ կատարած կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական

տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում:

Համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածում արտացոլված լիցենզավորման ենթակա գործունեության աղյուսակում: Նշված աղյուսակի 3-րդ կետի 6-րդ ենթակետերում ընդգրկված է անհատ ձեռնարկատերերի կամ կազմակերպությունների կողմից դեղերի մեծածախ իրացում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանվում են լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը:

Նշված հոդվածի 2-րդ կետի 2.9-րդ ենթակետի համաձայն անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից դեղերի մեծածախ իրացման համար՝ տարեկան պետական տուրքը հաշվարկվում է բազային տուրքի 100-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

Տվյալ դեպքում «Լավանդդա» ՍՊԸ-ի կողմից խախտումը վերջին 1 տարվա ընթացքում կատարվում է առաջին անգամ: Օրենքով սահմանված պետական տուրքը հաշվարկվում է 100.000 ՀՀ դրամ, որի տասնապատիկը կազմում է 1.000.000 ՀՀ դրամ, ուստի օրենսդրական պահանջից ելնելով « Լավանդդա» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառելի է 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք և 100.000 ՀՀ դրամ գումարի չափով վնասի հատուցում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ ՊԵԿ նախագահի պաշտոնակատարի 31.08.2022. N 904-Լ հրամանով, վարչական ակոտվ հաշվարկվել և «Լավանդդա» ՍՊԸ-ին գանձման է առաջադրվել 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ որպես հարկային պարտավորություն, ինչպես նաև՝ 100.000 ՀՀ դրամ օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

<u>3. Բողոքարկման առարկային վերաբերվող իրավական կարգավորումներ և եզրահանգումներ</u>

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ սպառող է հանդիսանում բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դեղերի մանրածախ իրացումը համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում կատարվում է միայն դեղատներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Դեղատնային գործունեության լիցենզիան ունի ներդիր, որում ներառվող պահանջների և պայմանների ցանկը սահմանվում է օրենքով սահմանված կարգով հաստատված դեղատնային գործունեության լիցենզավորման կարգով:

Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող անձը չի կարող իրականացնել դեղերի մեծածախ իրացում՝ դեղատնային գործունեության լիցենզիայի գործողության ժամանակահատվածում (այդ թվում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում):

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածում արտացոլված լիցենզավորման ենթակա գործունեության աղյուսակում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աղյուսակի 3-րդ բաժնի 6-րդ կետի համաձայն՝ դեղերի մեծածախ իրացումը համարվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել սույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով, բացառությամբ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.1-ին հոդվածով սահմանված դեպքերի:

Առանց լիցենզիայի նույն օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն և լիցենզավորման համար գանձվող պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:

ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված խախտումներ հայտնաբերվելու դեպքերում խախտումներ կատարած կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի 2.9-րդ ենթակետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից դեղերի մեծածախ իրացման համար՝ տարեկան պետական տուրքը հաշվարկվում է բազային տուրքի 100-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

Ելնելով վերը նշված իրավանորմերի դրույթներից, հիմք ընդունելով սույն որոշման 2-րդ կետում բերված փաստական տվյալները Հանձնաժողովը ևս հիմնավորված է համարում «ԼԱՎԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից առանց համապատասխան լիցենզիայի առկայության լիցենզավորման ենթակա

(դեղերի մեծածախ իրացում) գործունեություն իրականացնելու հանգամանքը: Մասնավորապես, իրականացված ՕՀՄ-ների շրջանակներում պարզվել է, որ մեծածախ իրացման լիցենզիայի պարտադիր պայմանի ուժի մեջ մտնելուց հետո հաշիվ-վավերագրերով «ԼԱՎԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է դեղերի մեծածախ իրացում՝ չունենալով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված համապատասխան տեսակի լիցենզիա: Այսինքն, «ԼԱՎԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են վերը նշված իրավանորմերի դրույթները, որի համար նախատեսված է պատասխանատվություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ վարչական ակտը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, այն հիմնավոր է, հետևապես՝ դիմում-բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ դիմում-բողոքով ներկայացված պահանջում, ըստ էության, տեղ է գտել վրիպակ, քանի որ դիմում-բողոքի համաձայն բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 09.11.2022թ.-ի N 1518374 ստուգման ակտը, այն դեպքում, երբ վերոգրյալ խախտումներն արձանագրվել են և համապատասխան պատասխանատվության միջոցները կիրառվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 09.11.2022թ.-ի N1518374 վարչական ակտով:

<u>4. Եզրափակիչ մաս</u>

Ելնելով քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ 09.11.2022թ.-ի N 1518374 վարչական ակտի դեմ «ԼԱՎԱՆԴԱ» ՍՊԸ դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

Signed by SMBATYAN ARTYOM
3210860416 ()
Date: 18.01.2023 10:30:51
+04:00